

**ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

ԱՐՇԱԿ ՆԵՐՍԻՍՅԱՆ

Բանալի բառեր - Պետական գնումներ, էլեկտրոնային աճուրդ, մրցույթ, ցուցանիշներ, արդյունավետություն, ավտոմատացում, մեխանիզմ:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մատակարարի ընտրությունը համարվում է գնումների ամենակարևոր որոշումներից մեկը: Մատակարարների ընտրությունը շատ քննարկվող և ուսումնասիրված թեմա է ինչպես ակադեմիական գրականության մեջ, այնպես էլ պրակտիկայում: Գործնականում ինչպես մասնավոր, այնպես էլ պետական գնորդները մատակարարներ ընտրելու համար օգտագործում են տարբեր մոդելներ:

ՀԻՄՆԱԽՆԴԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ակադեմիական գրականության մեջ որոշումների նորմատիվ տեսությունը, ի թիվս այլի, նախատեսում է, թե որ մեթոդն է օպտիմալ օգտագործել տարբեր հանգամանքներում:¹ ՀՀ գնումների համակարգում մրցութային ընթացակարգերը ներկայումս թվով 3-ն են՝ բաց մրցույթը, գնանշման հարցումը և էլեկտրոնային աճուրդը: Մեր կողմից իրականացվել է վերջիններիս արդյունավետության վերլուծություն:

Ըստ «Աղյուսակ 1»-ում ամփոփված տվյալների 2018-2019 թվականներին գնանշման հարցման ձևով իրականացվող մրցույթների մասնակիցների թիվը ավելացել է ավելի քան 45,000-ով, 2019-2020 թվականներին նվազել է մոտ 38,000-ով՝ հավանաբար համաճարակով և պատերազ-

¹ Fredo Schotanus, Gijsbert van den Engh, Yoran Nijenhuis, Jan Telgen, Supplier selection with rank reversal in public tenders, Journal of Purchasing and Supply Management, Volume 28, Issue

մով պայմանավորված, 2020-2021 թվականներին մասնակիցների թիվը նույնն է մնացել, իսկ 2021-2022 թվականներին նրանց թիվը նվազել է ավելին քան 160,000-ով՝ ուղեկցվելով կազմակերպված գնման ընթացակարգերի թվի կտրուկ անկումով:

Աղյուսակ 1. Գնանշման հարցում գնման ձևով ընթացակարգերի մասնակցության դեպքերը 2018-22 թվականներին՝ ըստ «armeps» էլեկտրոնային համակարգի վիճակագրության

Հ/հ	Տարի	Կազմակերպված գնման ընթացակարգերի ընդհանուր քանակը*	Մասնակիցների քանակը**	Մասնակիցների միջին թվաքանակը մեկ չափաբաժնի հաշվարկով	Կայացած ընթացակարգերի ընդհանուր թիվը***
1	2018	70,487	280,097	3.9	92,987
2	2019	70,647	325,213	4.6	82,745
3	2020	71,039	286,364	4.03	100,293
4	2021	71,691	287,297	4	96,374
5	2022	33,277	126,580	3.8	50,699

*Ներառված են այն ընթացակարգերը, որոնցում ճանաչված հաղթող մասնակից կա ընթացիկ տարում, հաշվարկը ներկայացված է ըստ չափաբաժինների:

**Նույն մատակարարի կողմից բազմակի մասնակցությունները ներառվում են հաշվարկում:

***Հաշվարկում ներառված են այն չափաբաժինները, որոնք կատարվել են ընթացիկ տարում:

Գնանշման հարցման ձևով իրականացվող ընթացակարգերի նվազումը ամենայն հավանականությամբ պայմանավորված է նաև էլեկտրոնային աճուրդներ իրականացնելու համակարգի վերագործարկմամբ: Ինչպես հայտնի է, այն երկար ժամանակ խափանված էր:

Առանձնակի ուշադրության արժանի է այն հանգամանքը, որ 2019 թվականից սկսած գնանշման հարցման ձևով իրականացվող գնման ըն-

2, Published by Elsevier Ltd, 2022, page1: Հղումը՝ «<https://www.sciencedirect.com/science/article/pii/S1478409221000832>»:

թացակարգերի մասնակիցների միջինացված ցուցանիշը նվազում է՝ 4.6-ից հասնելով 3.8-ի: Այսպիսի միտումը խոսում է այն մասին, որ գնանշման հարցման ձևով իրականացվող գնման ընթացակարգերի հանդեպ մասնակիցների ունեցած հետաքրքրությունը անկում է ապրում: Աղյուսակում ամփոփված տվյալների վերլուծությունը փաստում է ՓՄՁ խրախուսող կարևոր միջոցառումների ձեռնարկման անհրաժեշտության մասին: Թեև այդպիսի միջոցառումներ ներկայումս իրականացվում են, այնուամենայնիվ դրանք անհրաժեշտ չափերի չեն հասնում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մրցութային ընթացակարգերի նպատակը մասնակիցների ներգրավման և մրցակցության խրախուսման ճանապարհով գնման առարկայի ձեռքբերման գնի նվազեցումն է, մեր կողմից՝ բացի մասնակիցների թվի միջինացված ցուցանիշների դիտարկումից, իրականացվել է նաև մրցութային ընթացակարգի շրջանակում տարեկան կտրվածքով էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով ձեռքբերված գնման առարկաների նախահաշվային ընդհանուր գների և պայմանագրային գների համեմատական վերլուծություն:

Աղյուսակ 2. Էլեկտրոնային համակարգի միջոցով գնանշման հարցում գնման ձևով ձեռքբերված գնման առարկաների ընդհանուր նախահաշվային գների և ընդհանուր պայմանագրային գների տարբերությունը*

Հ/հ	Տարի	Գնման առարկայի նախահաշվային ընդհանուր գները /ՀՀ դրամ/	Գնման առարկայի պայմանագրային ընդհանուր գները /ՀՀ դրամ/	Նախահաշվային ընդհանուր գների և պայմանագրային ընդհանուր գների տարբերությունը /ՀՀ դրամ/	Նախահաշվային ընդհանուր գների և պայմանագրային ընդհանուր գների տարբերությունը՝ տոկոսային արտահայտությամբ
1	2018	13,006,056,159	9,153,984,288	3,852,071,871	29.6
2	2019	14,022,245,752	10,677,350,171	3,344,895,581	23.8
3	2020	24,090,720,184	18,302,817,364	5,787,902,820	24
4	2021	12,592,456,018	9,749,913,903	2,842,542,115	22.5


5	2022	14,646,654,528	11,346,130,243	3,300,524,285	22.5
---	------	----------------	----------------	---------------	------

*Ներառված են այն ընթացակարգերը, որոնցում ճանաչված հաղթող մասնակից կա ընթացիկ տարում, հաշվարկը ներկայացված է ըստ չափաբաժինների: Այն գնման առարկաները, որոնց համար նախահաշվային գներ սահմանված կամ պայմանագրային գները համակարգում մուտքագրված չեն հաշվարկում չեն ներառվել, ուստի այս գնման ձևի կիրառմամբ ձեռքբերման գնման առարկաների իրական թիվը շատ ավելի մեծ է:

Ինչպես կարելի է տեսնել վերը ներկայացված աղյուսակում ամփոփված տվյալների վերլուծությունից, 2018 թվականից սկսած նախահաշվային ընդհանուր գների և պայմանագրային ընդհանուր գների տարբերությունը տոկոսային արտահայտությամբ (հաշվարկային տնտեսում) 29.6 տոկոսից հասնում է 22.5 տոկոսի: Հետաքրքրական է, որ 2018-2022 թվականների ընթացքում գնանշման հարցման ձևի կիրառմամբ գնման ընթացակարգերի մասնակիցների միջինացված ցուցանիշի անկումը մոտավորապես համընկնում է հաշվարկային տնտեսման ցուցանիշի անկման հետ: Արդյունքում ստացվում է, որ մրցակցային այս ձևի կիրառման արդյունավետությունը 2018-2022 թվականներին ընթացքում նվազում է և ունի հետևյալ տեսքը.

Գնանշման հարցման գնման ձևի արդյունավետության անկումը վերջերս վերագործարկված Էլեկտրոնային աճուրդի հետ կապված է, որը գնումների մասին օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված չորս գնման ընթացակարգերից մեկն է և որը նախատեսված է պետական գնումները ավելի արդյունավետ և ավելի արագ դարձնելու համար: Էլեկտրոնային աճուրդը նույնպես նախատեսում է նախապես գրանցում, սակայն համեմատաբար պարզեցված ընթացակարգով: Համապատասխան ընթացակարգին մասնակցության հայտ և գնառաջարկ ներկայացնելուց հետո սահմանվում է աճուրդի անցկացման օր և ժամ: Սահմանված օրը և ժամին հերթական քայլերի միջոցով, ընթացակարգի մասնակիցները սկսում են իրենց գնառաջարկները նվազեցնել: Արդյունքում՝ հաղթող մասնակից է ճանաչվում նվազագույն գնառաջարկ ներկայացրած մասնակիցը:

Գծապատկեր 1. 2018-2022 թվականների ընթացքում գնանշման հարցման ձևի կիրառմամբ գնման ընթացակարգերի մասնակիցների միջինացված ցուցանիշի և հաշվարկային տնտեսման ցուցանիշի համեմատական



Էլեկտրոնային աճուրդի արդյունավետությունը գնահատելու նպատակով, այն կարելի է համեմատել մնացած այն գնման ընթացակարգերի հետ, որոնց շրջանակներում բանակցություններ են վարվում: Բանակցությունների կիրառմամբ ընթացակարգերի և էլեկտրոնային աճուրդի նպատակները համընկնում են: Բանակցությունների նշանակման և վարման կարգը սահմանվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, որտեղ ասվում է, որ «գնահատող հանձնաժողովի, պատվիրատուի և մասնակիցների միջև բանակցություններն արգելվում են, բացառությամբ, երբ մրցույթին մասնակցել է մեկ մասնակից, որի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին կամ հայտերի գնահատման արդյունքում հրավերի պահանջներին համապատասխան է գնահատվել միայն մեկ մասնակցի հայտ կամ առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական մի-

ջոցները: Սույն կետի համաձայն վարվող բանակցությունները կարող են հանգեցնել միայն առաջարկված գնի նվազեցմանը կամ վճարման պայմանների փոփոխությանը, իսկ բանակցությունները վարվում են միաժամանակյա՝ բոլոր մասնակիցների հետ»:

Էլեկտրոնային աճուրդի կազմակերպման գործընթացը բանակցություններով վարվող ընթացակարգերի հետ համեմատելով կարելի է ասել, որ այն միանգամից մի քանի խնդիրներ է լուծում: Այդպիսի խնդիրներ են մասնակիցների միջև հակամրցակցային համաձայնությունների բացառումը, գների նվազեցման ընթացքի համակարգումը, վեճերից խուսանավումը, մարդկային գործոնի հնարավորինս նվազեցումը, պատվիրատուի, հանձնաժողովի կամ գնումները համակարգողի կողմից իրականացվող չարաշահումների բացառումը: Էլեկտրոնային աճուրդը միանգամից լուծում կամ գոնե նվազեցնում է այսպիսի խնդիրները՝ մարդկային շփումներն ու մարդկային գործոնը նվազեցնելու ճանապարհով:

Ինչպես արդեն խոսվել է աշխատանքի նախորդ գլխում, բանակցություններից առաջ բանակցությունների հրավիրված մասնակիցների, բանակցությունները վարող հանձնաժողովի նախագահի կամ գնումները համակարգողի միջև հստակ պայմանավորվածությունների և գործողությունների արդյունքում մրցակցային միջավայրի խարխիվման մեծ ռիսկեր կան: Գին նվազեցնելու պոտենցիալով մասնակիցը կարող է մեկ այլ մասնակցի հետ պայմանավորվել, զինը չնվազեցնել, թույլ տալ մյուս մասնակցին հաղթել և վերջինից գումար ստանալ: Արդյունքում, պատվիրատուի ֆինանսական ռեսուրսներն անարդյունավետ են ծախսվում:

Էլեկտրոնային աճուրդի միջոցով, այս մի քանի կամ նմանատիպ բացասական երևույթները, որոնք կապված են հակամրցակցային պայմանավորվածությունների հետ լուծվում են: Այս իմաստով էլեկտրոնային աճուրդը արդյունավետ է:

Աղյուսակ 3. Էլեկտրոնային աճուրդի ձևով ընթացակարգերի մասնակցության դեպքերը 2018-22 թվականներին՝ ըստ «armeps» Էլեկտրոնային համակարգի վիճակագրության

Հ/հ	Տարի	Կազմակերպված գնման ընթացակարգերի ընդհանուր թիվը*	Մասնակիցների քանակը**	Մասնակիցների միջին թվաքանակը մեկ չափաբաժնի հաշվարկով	Կայացած ընթացակարգերի ընդհանուր թիվը***
1	2018	4,941	15,635	3.1	5,681
2	2019	10,421	33,663	3.2	16,706
3	2020	25	25	1	68
4	2021	6,136	15,188	2.4	6,703
5	2022	38,035	132,017	3.47	54,606

*Ներառված են այն ընթացակարգերը, որոնցում ճանաչված հաղթող մասնակից կա ընթացիկ տարում, հաշվարկը ներկայացված է ըստ չափաբաժինների:

**Նույն մատակարարի կողմից բազմակի մասնակցությունները ներառվում են հաշվարկում:

***Հաշվարկում ներառված են այն չափաբաժինները, որոնք կատարվել են ընթացիկ տարում:

Էլեկտրոնային աճուրդների ձևով իրականացվող ընթացակարգերի 2021-2022 թվականների աճող թիվը նույն տարիների գնանշման հարցման ձևով իրականացվող ընթացակարգերի նվազող թվերի հետ համաչափ է: 2021-2022 թվականներին գնանշման հարցման ձևով իրականացվող գնումների թիվը նվազել է 38,414-ով, իսկ Էլեկտրոնային աճուրդով իրականացվող գնումների թիվը աճել է 31,900-ով: Սա նշանակում է, որ գնանշման հարցման ընթացակարգի նվազող թվերը գրեթե համաչափ են Էլեկտրոնային աճուրդի աճող թվերի հետ: Գնանշման հարցման ձևով իրականացվող մրցույթներին մասնակիցների միջին թիվը 2019 թվականին կազմել է 4.6 անձ, սակայն հետագայում այս ցուցանիշն սկսել է նվազել՝ հասնելով մինչև 3.8-ի: Հետաքրքրական է, որ Էլեկտրոնային աճուրդների մասնակիցների միջին թիվը գնանշման հարցման ձևով իրականացվող ընթացակարգերից քիչ է և 2022 թվականին կազմել է 3.47 անձ՝ այն դեպ-

քում, երբ աճուրդներին մասնակցելն ավելի ավտոմատացված է, պահանջվող փաստաթղթերն ավելի քիչ են և ավելի դյուրին են պատրաստվում: Պատվիրատուները նույնպես այս ընթացակարգերն ավելի ավտոմատացված և հեշտացված ձևով են կազմակերպում: Կարծում ենք, որ էլեկտրոնային աճուրդների դրական ցուցիչ է նաև «Ադյուսակ 3.3»-ում ամփոփված 2018 թվականից ի վեր մասնակիցների միջին թվի աճող միտումը, որի համաձայն այս թիվը 3.1-ից հասել է 3.47-ի: Մեր դիտարկմամբ, էլեկտրոնային աճուրդներին մասնակցության դեպքերը կշարունակեն աճել՝ մասնակիցների աճուրդների ձևով իրականացվող ընթացակարգերին ընտելանալուն զուգահեռ: Մասնակիցների ավտոմատացված համակարգին ընտելացնելը կախված է վերը շարադրվածում անդրադարձ կատարված պետական գնումներում մշտապես իրականացվող փոփոխությունների մասին շահագրգիռ անձանց պատշաճ իրազեկելու, ինչպես նաև էլեկտրոնային աճուրդների իրականացման համակարգի խափանման խնդիրների հետ: Բացի կատարված օրենսդրական փոփոխությունների մասին իրավական բնույթ կրող հայտարարությունների հրապարակումից, անհրաժեշտ է նաև մեծ ուշադրություն դարձնել դրա ուսուցողական մասին: Ընդ որում, պետական գնումների մասին իրազեկվածության ապահովմանն ուղղված քայլերը պետք է ընդգրկեն ոչ միայն մատակարար համարվող և արդեն իսկ պետական գնումներին մասնակցող գործարարներին, որոնք արդեն պետական գնումների մասին որոշակի տեղեկատվության են տիրապետում, այլ նաև ՀՀ և արտերկրում գործունեություն ծավալող և մատակարար չհամարվող շրջանակների թիրախային խմբերին: Այս տեսանկյունից հսկայական հնարավորություններ է ապահովում վերջին տասնամյակներում ի հայտ եկած մասնագիտություններից մեկը՝ տվյալների վերլուծության մասին գիտությունը («data analytics»), որը զբաղվում է խնդիրն ավելի պարզ մասերի բաժանելու և որոշումներ կայացնելու համար տվյալներից ստացված պատկերացումների օգտագործման գործընթացով¹: Վերջինի միջոցով պետական գնումներին վերաբերող տվյալների վերհանումը, հավաքագրումը, դասակարգումն ու վերլու-

¹ **Y. Lakshmi Prasad**, Big data analytics, Notion Press, Chennai, 2016, page 11: Հղումը՝ «[https://sd.blackball.lv/library/Big_Data_Analytics_Made_Easy_\(2016\).pdf](https://sd.blackball.lv/library/Big_Data_Analytics_Made_Easy_(2016).pdf)»:

ծությունը կարող է լուծել այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են առաջին հերթին հաշվետվողականությունը, թափանցիկությունը, պատվիրատուների կողմից իրականացվող գնումների, վերջիններիս առանձնահատկությունների, նախասիրությունների, մատակարարներին վերաբերող առանձնահատկությունների մասին ամփոփ տեղեկատվության առկայությունը դրանց հիման վրա օրինաչափությունների վերհանումը և թիրախային գործընթացների կազմակերպումը, որը պետական կառավարման մարմինների կողմից ներկայումս սահմանափակ է իրականացվում կամ ընդհանրապես չի իրականացվում: Թիրախային գործընթացների կազմակերպման օրինակ է, երբ Կանադայի փոքր բիզնեսի էկոհամակարգի գնահատման ժամանակ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունը (2017թ., էջ 17) որոշել է ուժեղացնել կին ձեռներեցներին ֆինանսավորելու և գենդերային բազմազանությունը պետական և մասնավոր հատվածում ձեռքբերման անհրաժեշտությունը: Կանադայի դաշնային խորհրդարանի Կառավարության գործառնությունների և գնահատումների մշտական հանձնաժողովը մատնանշել է ապրանքների և ծառայությունների դաշնային գնումներն ավելի ներառական դարձնելու անհրաժեշտությունը, այդ թվում՝ կանանց պատկանող ՓՄՁ-ների համար:¹

Աղյուսակ 4. Էլեկտրոնային աճուրդ գնման ձևով ձեռքբերված գնման առարկաների ընդհանուր նախահաշվային գների և ընդհանուր պայմանագրային գների տարբերությունը*

Հ/հ	Տարի	Գնման առարկայի նախահաշվային ընդհանուր գները /ՀՀ դրամ/	Գնման առարկայի պայմանագրային ընդհանուր գները /ՀՀ դրամ/	Նախահաշվային ընդհանուր գների և պայմանագրային ընդհանուր գների տարբերությունը	Նախահաշվային ընդհանուր գների և պայմանագրային ընդհանուր գների
-----	------	---	--	---	--


¹ **Barbara Orser, Xiaolu (Diane) Liao, Allan L. Riding and Quang Duong.** Gender-responsive public procurement: strategies to support women-owned enterprises, Journal of Public Procurement, Vol. 21 No. 3, Emerald Publishing Limited, 2021, page 262: Հղումը՝ «<https://www.emerald.com/insight/content/doi/10.1108/JOPP-11-2019-0078/full/pdf?title=gender-responsive-public-procurement-strategies-to-support-women-owned-enterprises> »:

				/ՀՀ դրամ/	տարբերությունը՝ տոկոսային արտահայտությամբ
1	2018	4,553,859,895	3,960,366,579	593,493,316	13
2	2019	5,845,015,784	4,824,329,154	1,020,686,630	17.4
3	2020	1,113,101,632	1,000,501,102	112,600,530	10.1
4	2021	7,660,065,017	6,909,701,133	750,363,884	9.7
5	2022	70,375,873,621	54,663,036,466	15,712,837,155	22.3

*Ներառված են այն ընթացակարգերը, որոնցում ճանաչված հաղթող մասնակից կա ընթացիկ տարում, հաշվարկը ներկայացված է ըստ չափաբաժինների:

Վերը ներկայացվող աղյուսակում ամփոփված տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ ի տարբերություն գնանշման հարցման ձևով իրականացվող գնման ընթացակարգերի, էլեկտրոնային աճուրդներով իրականացվող ձեռքբերումները գնալով ավելի տնտեսող են դառնում: 2018-ից 2022 թվականներին էլեկտրոնային աճուրդով ձեռքբերված գնման առարկաների նախահաշվային ընդհանուր գների և պայմանագրային ընդհանուր գների տարբերությունը՝ տոկոսային արտահայտությամբ 13 տոկոսից հասել է 22.3 տոկոսի: Այս գնման ձևի կիրառման դեպքում ևս կարելի է տեսնել, որ հաշվարկային տնտեսման չափի մեծացումը փոխկապակցված է մեկ չափաբաժնի հաշվարկով մասնակիցների միջին թվաքանակի աճի հետ և ունի հետևյալ տեսքը.

Գծապատկեր 2. 2018-2022 թվականների ընթացքում էլեկտրոնային աճուրդի կիրառմամբ գնման ընթացակարգերի մասնակիցների միջինացված ցուցանիշի և հաշվարկային տնտեսման ցուցանիշի համեմատական.



Ամփոփելով հանգել ենք այն եզրակացությանը, որ մրցութային ընթացակարգ համարվող էլեկտրոնային աճուրդների կիրառությունը 2018-ից 2022 թվականներին ապահովել է արդյունավետության ցուցանիշների բարձրացում, քանի որ անգամ խափանումների և վերագործարկումների պարագայում 2022 թվականին գրանցել է գրեթե նույնքան հաշվարկային տնտեսման ցուցանիշ, որքան գնանշման հարցման ձևով իրականացվող ընթացակարգերը: Մեր դիտարկմամբ ինչպես մասնակիցների միջինացված ցուցանիշների, այնպես էլ հաշվարկային տնտեսման ցուցանիշների աճման միտումները հետագա տարիներին կպահպանվեն: Քանի որ էլեկտրոնային աճուրդների կազմակերպումն ու մասնակցությունն ավտոմատացված է և ավելի դյուրին, ապա կարծում ենք, որ սա ևս մեկ փաստ է, որը խոսում է պետական գնումների էլեկտրոնային համակարգի ինովացման անհրաժեշտության մասին:

Մյուս կարևոր հարցը մասնակիցների ներգրավման և մասնակիցների թվի մեծացման միջոցով գնման ընթացակարգերն ավելի արդյունավետ և շահավետ դարձնելն է: Առաջին հայացքից կարող է թվալ, թե միայն

մասնակիցների թվի ընդլայնումը պետք է ինքնին նվազեցնի գնման գինը՝ մրցակցություն խրախուսելու միջոցով: Իհարկե, սա այն տարբերակն է, որին հասնելու ճանապարհներից հիմնականը թափանցիկ գնման ընթացակարգերի կազմակերպումն է: Թափանցիկության և հավասարության կարելի է հասնել օրենսդրական դաշտի միջոցով հավասար պայմանների ստեղծմամբ, ընթացակարգին մասնակցելու պայմանների լիցքաթափմամբ, տեղեկատվության հասանելիությամբ և ընթացակարգերի մասին մասնակիցների ավելի ու ավելի մեծ դաշտի իրազեկման միջոցով:

Գնանշման հարցման և էլեկտրոնային աճուրդների ձևով իրականացվող ընթացակարգերին վերաբերող տվյալների վերլուծությունը ցույց տվեց, որ վերոնշյալ տրամաբանությունը բերում է սպասված արդյունքի և հանգեցնում պատվիրատուի կողմից իրականացված շահավետ գնումների: Սակայն կատարված ուսումնասիրությունների ընթացքում հանդիպած և ուշադրության արժանացած հոդվածներից մեկը՝ Ռուսաստանի Դաշնության պետական գնումների շրջանակներում կատարված ուսումնասիրությունների մասին, փաստում է ևս մեկ հանգամանք:

ՌԴ Ազգային հետազոտական համալսարանի աշխատակիցներ Աննա Բալսևիչը, Սվետլանա Պիվովառովը և Ելենա Պոդկոլզինան ուսումնասիրություններ են կատարել և «Межрегиональное сравнение эффективности государственных закупок в России» վերնագրով պրեզենտացիա են պատրաստել ու ներկայացրել «Устойчивые государственные закупки: тенденции развития и вызовы» վերտառությամբ միջազգային սեմինարում¹: Ուսումնասիրությունների արդյունքում կազմված հոդվածը տեղադրված է ՌԴ Ազգային հետազոտական համալսարանի «Բարձրագույն տնտեսագիտական դպրոցի» պաշտոնական կայքում:

Ընդհանրապես Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության պետական գնումների մեջ նմանությունները բազմաթիվ են, ուստի էլեկտրոնային աճուրդի համեմատական վերլուծությունը իրականացնել ՌԴ օրինակով նպատակահարմար ենք համարում: ՌԴ պետական գնումները նույնպես կարգավորվում են մոտավորապես նույն կերպ

և տարածվում են ամբողջ ՌԴ տարածքում: ՌԴ-ում պետական գնումների իրականացման հետևյալ մեխանիզմներն են.

1. մեկ անձից գնում,
2. փակ աուկցիոնի միջոցով գնում (հինգ հարյուր հազար ռուբլին չգերազանցելու դեպքում),
3. բաց աուկցիոնի միջոցով գնում (կամ էլեկտրոնային աուկցիոնի միջոցով),
4. բաց մրցույթի անցկացման միջոցով գնում (սահմանափակ դեպքերում):

Նշված հետազոտությունը իրականացվում է բենզինի օրինակով, քանի որ բենզինի շուկայական գինը՝ համեմատած մնացած գնման առարկաների հետ, որոշակի կայունություն ունի: Հարկ ենք համարում հիշատակել նաև ամերիկացի տնտեսագետ Ջ. Ստիգլերի «*Economics of Information, 1961*» աշխատությունը, որտեղ հեղինակը ապացուցում է, որ տեղեկատվության և մասնակիցների թվի քանակը ուղիղ համեմատական է գնման գնի նվազեցմանը և մատակարարների որոնման վրա ծախսված ռեսուրսների ունիվերսալությանը: Այնուամենայնիվ, նույն Ստիգլերը իր հետագա աշխատություններից մեկում՝ օլիգոպոլ շուկայի (շուկա, որին հասանելիություն ունեն սահմանափակ թվով ընկերություններ) ուսումնասիրության շրջանակներում, փաստում է հակառակը և շեշտում, որ մասնակիցների թվի ընդլայնումը կարող է հակառակ էֆեկտ ցուցաբերել: Այս պայմաններում պատվերի կատարումը վերահսկելու համար կարող են անբավարար միջոցներ հատկացվել, ինչը կհանգեցնի դավադրության և գների բարձրացման:

Ուսումնասիրության հեղինակներն արդյունքում նույնպես հանգում են նույն եզրակացությանը և բենզինի օրինակով վերլուծություն կատարելով փաստում են. պայմանագրի գինը ցածր է, երբ գնման ընթացակարգին մասնակցում է միայն մեկ մատակարար և մասնակիցների թվի ընդլայնումը միշտ չէ, որ բերում է պայմանագրի գնի նվազեցմանը: ՌԴ բենզինի շուկայի համար կատարված ուսումնասիրությունից պարզ է

¹ Анна Бальсевич, Светлана Пивоварова, Елена Подколзина, Межрегиональное сравнение эффективности государственных закупок в России, Научно-Образовательный портал IQ, հղումը՝ <https://iq.hse.ru/news/177668860.html>»:

դառնում, որ ամենաարդյունավետ գնումը կատարվում է այն դեպքում, երբ մասնակիցների թիվը մեծ է, իսկ գնման ընթացակարգին մասնակցություն ունի նաև շուկայի առաջատարը: Գնման ցածր գնով հաղթող ճանաչված մատակարարների կողմից չարաշահումներ շատ հաճախ են կատարվում: Մատակարարումը պատշաճ չի իրականացվում, պետական համակարգում ունեցած կապերի, փակ դռների հետևում իրականացվող պայմանավորվածությունների միջոցով:

Վերոնշյալ ուսումնասիրությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ ՀՀ պետական գնումներում երկփուլ մրցույթներով իրականացվող գնման ընթացակարգերը պետք է ավելի հաճախակի կիրառել: Քանի որ գնման առարկաների որոշ տեսակների դեպքում միայն մեծ թվով մասնակիցների ներգրավումը, մրցակցության ապահովումը և դրա արդյունքում գնման առարկաների ձեռքբերման արժեքների նվազեցումը կարող է բավարար չլինել կամ նվազեցված գինը գնման առարկայի որակական հատկանիշների վրա կարող է բացասաբար ազդել, ապա կարծում ենք, որ անհրաժեշտ է ՀՀ պետական գնումներում երկփուլ մրցույթների դերի բարձրացմանն ուղղված լրացուցիչ մեխանիզմներ կիրառել:

Հաջորդ՝ լայնորեն կիրառվող մրցութային ընթացակարգը ՀՀ-ում բաց մրցույթն է:

Աղյուսակ 5. Բաց մրցութի ձևով ընթացակարգերի մասնակցության դեպքերը 2018-22 թվականներին՝ ըստ «armeps» էլեկտրոնային համակարգի վիճակագրության.

Հ/հ	Տարի	Կազմակերպված գնման ընթացակարգերի ընդհանուր թիվը*	Մասնակիցների քանակը**	Մասնակիցների միջին թվաքանակը մեկ չափաբաժնի հաշվարկով	Կայացած ընթացակարգերի ընդհանուր թիվը***
1	2018	7,617	72,710	9.54	9,184
2	2019	2,970	22,050	7.4	3,473
3	2020	1,647	9,004	5.4	3,055
4	2021	2,716	21,709	7.99	3,544

5	2022	3,579	21,412	5.98	4,768
---	------	-------	--------	------	-------

*Ներառված են այն ընթացակարգերը, որոնցում ճանաչված հաղթող մասնակից կա ընթացիկ տարում, հաշվարկը ներկայացված է ըստ չափաբաժինների:

**Նույն մատակարարի կողմից բազամակի մասնակցությունները ներառվում են հաշվարկում:

***Հաշվարկում ներառված են այն չափաբաժինները, որոնք կատարվել են ընթացիկ տարում:

Ինչպես գիտենք, բաց մրցույթը ներկայումս կիրառվում է, երբ գնման առարկայի նախահաշվային գինը գերազանցում է 80,000,000 ՀՀ դրամը: Խոշոր գնումներն իրականացվում են հենց այս ընթացակարգի միջոցով: Բացի այդ, բաց մրցույթի հայտերի ներկայացման ժամկետներն ամենաերկարն են (էլեկտրոնային եղանակով իրականացվող գնումների դեպքում առնվազն երեսուն օրացուցային օր է¹): Չնայած դրան բաց մրցույթներով իրականացվող գնման դեպքերը, ինչպես նաև դրանց մասնակցության միջին թվաքանակները նվազել են: Այս ձևով կազմակերպված գնման ընթացակարգերի թիվը 2018 թվականի 7,617-ից հասել է 2022 թվականի 3,579-ին, իսկ մասնակիցների միջին թվաքանակները՝ 2018 թվականի 9.54-ից հասել է 2022 թվականի 5.98 ցուցանիշին: 2020 թվականի կտրուկ նվազումը կրկին պայմանավորված է համաճարակով և պատերազմով: Եթե գնանշման հարցման ձևով իրականացվող գնումների նվազումը պայմանավորված էր էլեկտրոնային աճուրդների վերագործարկումով, ապա բաց մրցույթներով իրականացվող գնումների դեպքերը նվազել են գնանշման հարցման ձևով իրականացվող գնումների շեմը 70 միլիոնից 80 միլիոնի հասցնելու պատճառով չի համապատասխանում իրականությանը, քանի որ այդ փոփոխությունը ուժի մեջ է մտել 2022

¹ «Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդված 20, մաս 2, հղումը՝ «<https://www.arlis.am/documentview.aspx?docid=165080>»:

թվականի հունիսի 1-ից¹, իսկ 2022 թվականին կազմակերպված բաց մրցույթների դեպքերն 2021 թվականի նկատմամբ աճել են:

Բաց մրցույթների կազմակերպման և դրանց մասնակցության դեպքերի նվազեցումը կարող է պայմանավորված լինել կա՛մ խոշոր գնման առարկաների նվազեցումով, կա՛մ պատվիրատուների կողմից գնումների մասին օրենսդրության համատարած շրջանցմամբ: 2018 թվականից ի վեր բաց մրցույթների կազմակերպման դեպքերը նվազել են շուրջ երկու անգամ:

Աղյուսակ 6. Էլեկտրոնային համակարգի միջոցով բաց մրցույթի գնման ձևով ձեռքբերված գնման առարկաների ընդհանուր նախահաշվային գների և ընդհանուր պայմանագրային գների տարբերությունը*.

Հ/հ	Տարի	Գնման առարկայի նախահաշվային ընդհանուր գները /ՀՀ դրամ/	Գնման առարկայի պայմանագրային ընդհանուր գները /ՀՀ դրամ/	Նախահաշվային ընդհանուր գների և պայմանագրային ընդհանուր գների տարբերությունը /ՀՀ դրամ/	Նախահաշվային ընդհանուր գների և պայմանագրային ընդհանուր գների տարբերությունը տոկոսային արտահայտությամբ
1	2018	87,822,016,260	70,725,698,590	17,096,317,670	19.4
2	2019	96,096,206,043	78,889,558,626	17,206,647,417	17.9
3	2020	105,771,684,715	87,860,150,952	17,911,533,763	16.9
4	2021	113,077,529,227	96,344,317,418	16,733,211,809	14.7
5	2022	407,741,287,652	293,832,059,769	113,909,227,883	27.9

*Ներառված են այն ընթացակարգերը, որոնցում ճանաչված հաղթող մասնակից կա ընթացիկ տարում, հաշվարկը ներկայացված է ըստ չափաբաժինների: Այն գնման առարկաները, որոնց համար նախահաշվային գներ սահմանված կամ պայմանագրային գները համակարգում մուտքագրված չեն հաշվարկում չեն

¹ 2022 թվականի հունվարի 21-ի «ՀՕ-4-Ն» ՀՀ օրենքը «Գնումների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին, հոդված 11, մաս 1, հղումը՝

ներառվել, ուստի այս գնման ձևի կիրառմամբ ձեռքբերված գնման առարկաների իրական թիվը շատ ավելի մեծ է:

Աղյուսակ հ. 3.6-ի վերլուծությունից կարելի տեսնել, որ չնայած բաց մրցույթով իրականացվող գնման ընթացակարգերի նվազման միտումին՝ այս գնման ձևի կիրառմամբ գնումների չափը դրամային արտահայտությամբ աճ է գրանցում: Հետաքրքրական է, որ այդ աճը մինչև 2021 թվականը ուղեկցվում է հաշվարկային տնտեսման նվազմամբ: Վերջինս 2018 թվականի 19.4 տոկոսից հասնում է 2021 թվականի 14.7 տոկոսին: Ուշադրության արժանի է նաև այն հանգամանքը, որ մինչև 2021 թվականն ընկած ժամանակահատվածը հաշվարկային տնտեսման չափի անկումը համընկնում է նաև մասնակիցների միջին թվաքանակի անկման հետ (9.54 մինչև 5.98): 2022 թվականի կտրուկ աճը, ըստ ամենայնի, կապված է ճանապարհաշինական աշխատանքների մեծ թափ ստանալու հետ:

Մշտապես ուշադրության կենտրոնում գտնվող և գնման ընթացակարգերից ամենառիսկայինը համարվող գնման ձևը՝ մեկ անձից գնումն է: 2018 թվականից սկսած կազմակերպված մեկ անձից գնման ընթացակարգերի թիվը 10,484-ից հասել է 2022 թվականի 13,165-ի՝ գրանցելով շուրջ 20 տոկոս աճ: Առաջին հայացքից մեկ անձից գնման ձևով իրականացվող գնման ընթացակարգերի աճը կարող է խաբուսիկ լինել, ուստի այդպիսի գնման դեպքերի աճն անհրաժեշտ է դիտարկել պետբյուջեի ծախսային մասի ֆոնին: 2018 թվականի ՀՀ պետական բյուջեի ծախսային մասը կազմել է 1,447,083,011.5 հազ. ՀՀ դրամ, իսկ 2022 թվականին՝ 2,242,625,453.6 հազ. ՀՀ դրամ, այսպիսով գրանցելով ավելի քան 35 տոկոս աճ: Թեև բյուջեի ծախսային մասի աճի ֆոնին մեկ անձից գնման դեպքերի աճի դիտարկումը չի կարող նման բացասական երևույթը արդարացնելու փորձ դիտարկվել, այնուամենայնիվ այս մոտեցումը ՀՀ-ում իրականացվող մեկ անձից գնման գործընթացների մասին ավելի իրատեսական պատկեր է հաղորդում: Այսպիսի դիտարկումը ցույց է տալիս, որ մեկ անձից գնման դեպքերի աճը պետական բյուջեի ծախսային մասի աճի հետ համաչափ չէ և անզամ նվազող միտում է ցուցաբերում:

Աղյուսակ 7. Մեկ անձից գնման ընթացակարգերի դեպքերը 2018-22 թվականներին՝ ըստ «armeps» էլեկտրոնային համակարգի վիճակագրության.

Հ/հ	Տարի	Կազմակերպված գնման ընթացակարգերի ընդհանուր թիվը*	Մասնակիցների քանակը**	Մասնակիցների միջին թվաքանակը մեկ չափաբաժնի հաշվարկով	Կայացած ընթացակարգերի ընդհանուր թիվը***
1	2018	10,484	12,068	1.15	14,983
2	2019	12,186	13,482	1.1	17,813
3	2020	12,348	13,206	1	19,744
4	2021	11,170	11,574	1	18,849
5	2022	13,165	14,031	1	18,684

*Ներառված են այն ընթացակարգերը, որոնցում ճանաչված հաղթող մասնակից կա ընթացիկ տարում, հաշվարկը ներկայացված է ըստ չափաբաժինների:

**Նույն մատակարարի կողմից բազամակի մասնակցությունները ներառվում են հաշվարկում:

***Հաշվարկում ներառված են այն չափաբաժինները, որոնք կատարվել են ընթացիկ տարում:

Մշտապես քննարկումների առիթ հանդիսացող գնման ձև է նաև հրատապության հիմքով մեկ անձից գնումը: Այն մնացած մրցութային ընթացակարգերից տարբերվում է հիմնականում հայտերի ներկայացման կարճ ժամկետներով, որոնք 3-ից մինչև 5 աշխատանքային օրերի մեջ են տատանվում: Այդ իսկ պատճառով դրանց մասնակցության դեպքերը զիջում են մրցութային այլ ընթացակարգերին և ավելի քիչ մրցակցային են համարվում: Եթե ամենամրակցային ընթացակարգ համարվող բաց մրցույթի դեպքում մասնակիցների միջին թվաքանակը վերջին 5 տարիների ընթացքում կազմում է 7.2 մասնակից/չափաբաժին, գնանշման հարցման դեպքում՝ 4 մասնակից/չափաբաժին, էլեկտրոնային աճուրդների դեպքում՝ 2.6 մասնակից/չափաբաժին (պետք է հաշվի առնել, որ աճուրդների համակարգը երկար ժամանակ չի գործարկվել, ինչի հետևանքով այս գնման ձևին վերաբերող միջինացված ցուցանիշը նվազել է), մեկ անձից գնման դեպքում՝ 1 մասնակից/չափաբաժին, ապա հրատա-

պուլյան հիմքով մեկ անձից գնման դեպքում այդ թիվը կազմում է 2.6 մարդ/չափաբաժին և մոտեցնում մեկ անձից գնման ձևով իրականացվող ընթացակարգի ցուցանիշին: Թեև քանակական տեսանկյունից այս գնման ձևի կիրառությունը շատ չէ, ինչը տեսանելի է «Աղյուսակ 3.8»-ում ամփոփված տվյալներում, այնուամենայնիվ այդ դեպքերը 2018-ից 2020 թվականների ընթացքում աճել են 5.5 անգամ, իսկ 2018-2022 թվականներին գրեթե 4 անգամ: Այս տվյալները խոսում են հրատապուլյան հիմքով մեկ անձից գնման դեպքերի կիրառությունը սահմանափակելու անհրաժեշտության մասին:

Աղյուսակ 8. Հրատապուլյան հիմքով մեկ անձից գնման ընթացակարգերի դեպքերը 2018-22 թվականներին՝ ըստ «armeps» էլեկտրոնային համակարգի վիճակագրության.

Հ/հ	Տարի	Կազմակերպված գնման ընթացակարգերի ընդհանուր թիվը*	Մասնակիցների քանակը**	Մասնակիցների միջին թվաքանակը մեկ չափաբաժնի հաշվարկով	Կայացած ընթացակարգերի ընդհանուր թիվը***
1	2018	232	463	1.99	253
2	2019	1450	4822	3.3	1544
3	2020	1282	2516	1.93	1416
4	2021	1022	2965	2.9	1127
5	2022	902	2752	3	1048

*Ներառված են այն ընթացակարգերը, որոնցում ճանաչված հաղթող մասնակից կա ընթացիկ տարում, հաշվարկը ներկայացված է ըստ չափաբաժինների:

**Նույն մատակարարի կողմից բազամակի մասնակցությունները ներառվում են հաշվարկում:

***Հաշվարկում ներառված են այն չափաբաժինները, որոնք կատարվել են ընթացիկ տարում:

Հարկ ենք համարում նշել, որ «armeps» էլեկտրոնային համակարգի միջոցով վերհանված վիճակագրական տվյալների ուսումնասիրությունը դրանցով զբաղվող անձնաց մոտ որոշակի հարցեր և կասկածներ կարող է

առաջացնել: Վիճակագրական տվյալներից որոշների համադրումը դրանց ճշտության մեջ կասկածներ է առաջացնում և ստիպում դրանք անհուսալի դիտարկել: Օրինակ, 2018-2022 (ներառյալ վերջին տարին) թվականների ընթացքում այս համակարգի միջոցով կազմակերպվել է 317,141 չափաբաժին գնանշման հարցում, իսկ կայացել է 423,098 չափաբաժին, էլեկտրոնային աճուրդներին միջոցով կազմակերպվել է 59,558 չափաբաժին, որոնցից կայացել է 83,764-ը, իսկ բաց մրցույթների դեպքում կազմակերպվել է 18,530 և կայացել՝ 24,024 չափաբաժին: Ինչպե՞ս կարող է էլեկտրոնային համակարգի միջոցով սահմանված հաշվետու ժամանակահատվածում ամփոփվել զգալի թվով շատ կայացած, քան կազմակերպված չափաբաժիններ: Նմանատիպ անհամապատասխանություններ էլեկտրոնային համակարգում հաճախ կարելի է հանդիպել:

Ամփոփելով մրցութային ընթացակարգեր համարվող գնանշման հարցման, էլեկտրոնային աճուրդի և բաց մրցույթի արդյունավետության վերլուծությունը՝ մեր կողմից կիրառվել է ընթացակարգերի արդյունավետության վերլուծության մեթոդոլոգիական նոր մոտեցում, որն իրենից ենթադրում է ձեռքբերված գնման առարկաների ընդհանուր նախահաշվային գների և ընդհանուր պայմանագրային գների տարբերության (հաշվարկային տնտեսման), ինչպես նաև գնման ընթացակարգերի մասնակիցների միջինացված ցուցանիշի և հաշվարկային տնտեսման ցուցանիշի համեմատական, որի արդյունքում յուրաքանչյուր գնման ընթացակարգի մասով ստացել ենք մեկ թվով արտահայտված արդյունավետության ցուցանիշ՝ հետևյալ կերպ.

$$U3 = UUT\theta / \sum SU3,$$

որտեղ $U3$ -ն յուրաքանչյուր ընթացակարգի մեկ թվով արտահայտված արդյունավետության ցուցանիշն է, որն ինչքան բարձր է, այնքան գնման ընթացակարգն ավելի արդյունավետ է,

$\sum SU3$ -ն դիտարկվող ժամանակահատվածում տոկոսային արտահայտությամբ հաշվարկային տնտեսման միջինացված ցուցանիշն է, որն իրենից ներկայացնում է տվյալ ընթացակարգի կիրառմամբ ձեռքբերված գնման առարկաների ընդհանուր նախահաշվային գների և ընդհանուր պայմանագրային գների տարբերությունը,

ՄՄԹ-ն դիտարկվող ժամանակահատվածում կազմակերպված գնման ընթացակարգերի բոլոր չափաբաժինների մասնակիցների միջինացված թվաքանակն է:

Աղյուսակ 3.9 Գնանշման հարցման, էլեկտրոնային աճուրդի և բաց մրցույթի 2018-2022 թվականների ամփոփ տվյալները՝ ըստ «armeps» էլեկտրոնային համակարգի վիճակագրության.

Հ/հ	Գնման ընթացակարգի տեսակ	Մասնակիցների միջինացված թվաքանակը 2018-2022 թվականներին, (մասնակիցների միջին թվաքանակ՝ մեկ չափաբաժնում)	Ընթացակարգի ապահոված հաշվարկային տնտեսման միջինացված ցուցանիշը 2018-2022 թվականներին (տոկոս)	Հաշվարկային տնտեսում/մասնակիցների միջին թվաքանակ հարաբերակցությունը
1	Գնանշման հարցում	4.11	24.41	5.93
2	Բաց մրցույթ	7.9	22.56	2.85
3	Էլեկտրոնային աճուրդ	3.2	20.31	6.34

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կատարված վերլուծության արդյունքում հանգել ենք այն եզրակացությանը, որ բաց մրցույթը դեռևս մնում է ամենաշատ թվով մասնակիցներ ներգրավող ընթացակարգը, գնանշման հարցումը՝ ամենաշատ հաշվարկային տնտեսման ցուցանիշներ ապահովող ընթացակարգը, իսկ էլեկտրոնային աճուրդը չնայած նրան, որ երկար ժամանակ խափանված էր, ունի հաշվարկային տնտեսման և մասնակիցների միջինացված թվաքանակի հարաբերակցության ցուցանիշի (ԱՅ) ամենաբարձր մակարդակը և արդեն գերազանցում է բաց մրցույթին ու գնանշման հարցմանը: Մեր կողմից կիրառված մեթոդոլոգիական նոր մոտեցման համաձայն էլեկտրոնային աճուրդը վերջին 5 տարիներին համարվում է ամենաարդյունավետ գնման ընթացակարգը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2019 թվականից սկսած գնանշման հարցման ձևով իրականացվող գնման ընթացակարգերի մասնակիցների միջինացված ցուցանիշը նվազում է և մոտավորապես համընկնում է դրա հաշվարկային տնտեսման ցուցանիշի նվազման հետ, իսկ բաց մրցույթների կիրառմամբ գնումների չափը դրամային արտահայտությամբ աճ է գրանցում, սակայն ուղեկցվում է մասնակցության դեպքերի և մինչև 2021 թվականը՝ հաշվարկային տնտեսման նվազեցման միտումով, կարծում ենք, որ գնանշման հարցումը և բաց մրցույթը ժամանակի ընթացքում պետք է վերածվեն ավելի ավտոմատացված տարբերակների և գնալով նմանվեն էլեկտրոնային աճուրդին:

Աճող մրցակցության և ծախսերի մեծացման լույսի ներքո՝ գնումների և մատակարարման կառավարման (PSM) թվայնացումը կազմակերպությունների համար հանդիսանում է հիմնական ներդրումային առաջնահերթություն, քանի որ այս ոլորտը հակված է հետ մնալ այլ բիզնես գործառույթներից: Այդ իսկ պատճառով առաջադեմ թվային տեխնոլոգիան՝ «Robotic Process Automation (RPA)»-ը ավելի ու ավելի է կիրառվում գնումների գործընթացների վերանախագծման, օպտիմալացման և ավտոմատացման համար: Այս տեխնոլոգիան բաղկացած է ծրագրային լիցենզիաներից (այսպես կոչված բոտերից), որոնք ընդօրինակում են մարդու վարքագիծը և գործողությունները:¹

Аршак Нерсисян, Анализ эффективности тендерных процедур, предусмотренных законодательством о государственных закупках РА - В статье автор анализирует эффективность тендерных процедур государственных закупок РА. При сравнительном рассмотрении фактов он разработал предусмотренные законодательством представления об эффективности конкурентных закупок, а затем представил собственные подходы и предложения с точки зрения дальнейшего повышения этой эффективности. Развивается точка зрения, что начиная с 2019 года средний показатель

¹ **Christian Flechsig, Franziska Anslinger, Rainer Lasch**, Robotic Process Automation in purchasing and supply management: A multiple case study on potentials, barriers, and implementation, Journal of Purchasing and Supply Management Volume 28, Issue 1, Elsevier, 2022, page 1: Հղումը՝ « <https://www.sciencedirect.com/science/article/pii/S1478409221000522> »:

участников закупочных процедур, осуществляемых в форме запроса котировок, снижается и примерно совпадает с уменьшением показателя экономики его расчета, а также объема закупок. Использование открытых тендеров увеличивается в драмовом выражении, но сопровождается тенденцией к уменьшению количества случаев участия и экономии расчетов до 2021 года, поэтому запрос котировок и открытый тендер со временем должны превратиться в более автоматизированные варианты и все больше напоминать электронные аукционы. В условиях усиления конкуренции и роста издержек цифровизация управления закупками и поставками (PSM) является ключевым инвестиционным приоритетом для организаций, поскольку эта область имеет тенденцию отставать от других бизнес-функций. Вот почему передовые цифровые технологии, роботизированная автоматизация процессов (RPA), все чаще используются для перепроектирования, оптимизации и автоматизации процессов закупок. Эта технология состоит из лицензий на программное обеспечение (так называемых ботов), имитирующих поведение и действия человека.

Arshak Nersisyan, Analysis of the effectiveness of the tender procedures provided by the legislation of the RA state procurement - In the article, the author analyzes the effectiveness of the RA state procurement tender procedures. With a comparative examination of the facts, he developed concepts about the efficiency of competitive procurement provided by legislation, and then presented his own approaches and proposals from the point of view of further increasing that efficiency. The point of view is being developed that starting from 2019, the average rate of participants in procurement procedures carried out in the form of a request for quotations is decreasing and approximately coincides with the decrease of its calculation economy indicator, and the amount of purchases using open tenders is increasing in dram terms, but accompanied by a tendency to decrease the number of participation cases and calculation economy until 2021, so the request for quotation and open tender should turn into more automated options over time and increasingly resemble electronic auctions. In light of increasing competition and rising costs, digitizing procurement and supply management (PSM) is a key investment priority for organizations, as this area tends to lag behind other business functions. That's why advanced digi-

tal technology, Robotic Process Automation (RPA), is increasingly being used to redesign, optimize and automate procurement processes. This technology consists of software licenses (so-called bots) that imitate human behavior and actions.

Ուղարկվել է խմբագրություն 10.04.2024թ.

Գրախոսվել է 15.04.2024թ.

Ստորագրվել է տպագրության 20.04.2024 թ.